ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«06» մայիսի 2024թ. № 471

ԱՆԱՀԻՏ ԶԱՎԵՆԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ 06-028-0118-0002 ԵՎ 06-028-0118-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15122023-06-0061 և 15122023-06-0049 վկայականները, Կադաստրի կոմիտեի կողմից հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06999N9XU5QC) և Անահիտ Զավենի Ղուկասյանի (ծնված՝ 09.09.1965թ.) դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Անահիտ Զավենի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ գյուղ Գեղասար 1 հողամաս» և «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ, գյուղ Գեղասար 2 հողամաս» հասցեներում գտնվող հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության 06-028-0118-0001 և 06-028-0118-0002 կադաստրային ծածկագրերով 0,61 և 0,402892 հեկտար մակերեսով հանգստի համար նախատեսված գործառնական նշանակության հողամասերը:
2. Սույն որոշման 1-ին կետով միավորված անշարժ գույքին տրամադրել «Համայնք Սպիտակ, գյուղ Գեղասար, 1-2 հողամաս» հասցեն:
3. Սույն որոշմամբ տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. մայիսի 6
ք.Սպիտակ